

11 / 06 - 13 / 06 / 2012

քաղցր վարանմունք

S

կոնֆերանս / քաղցր վաթսունականներ

1960-ականների հայկական և թուրքական
կինեմատոգրաֆը. կոնֆերանս և ֆիլմերի
ցուցադրություններ

sweet




Հյուրընկալող՝
Ազգային Կինոյի Զարգացման Հիմնադրամ

Եվրասիա համագործակցություն հիմնադրամն աջակցում է այս նախագծին ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության (USAID) «Աջակցություն Հայաստան-Թուրքիա հարաբերությունների բարելավմանը» (SATR) ծրագրի շրջանակներում:

«Քաղցր վարանմունք՝ քաղցր 60-ականներ» նախագիծը հնարավորություն կտա Հայաստանի և Թուրքիայի հասարակություններին տեղեկանալ երկու երկրներում՝ հանրային գիտակցությունը ձևավորող գլխավոր մշակութային արտադրանքներին, որոնց ստեղծման ժամանակաշրջանում, ի հայտ եկած գաղափարները, առ այսօր ուղղորդում են այդ հասարակությունների զարգացումը: Նախագծի համար ընտրված ֆիլմերը դարձել են, կարելի է ասել, երկու հասարակությունների ինքնության խորհրդանիշեր: Դրանք հիշվում են, անընդհատ ցուցադրվում, մեջբերվում, քննարկվում, ուսուցանվում, իսկ դրանցում հնչող արտահայտությունները կամ դրվագները դարձել են թևավոր խոսքեր, որոնք ինքնության ուղերձներ են այսօր հասցնում այս հասարակությունների լայն շերտերին:

Ուստի՝ այս կարևոր աշխարհայացք ձևավորող կինեմատոգրաֆիստական արտադրանքներն իմանալն ու հասկանալը երկու հասարակություններին, հատկապես՝ նոր սերունդներին կօգնի կատարել ևս մեկ քայլ հասկանալու համար թե որտեղից է սկիզբ առել երկխոսության փոխադարձ նույնականացման և ճանաչման ուղղված իրենց այսօրվա որոնումը:

Այս հրատարակումը հնարավոր է դարձել ամերիկյան ժողովրդի առատաձեռն աջակցության՝ ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության (USAID), ինչպես նաև՝ Erste Stiftung-ի և Allianz Kulturstiftung-ի հովանավորության շնորհիվ: Այս հրատարակման բովանդակությունը կարող է չհամընկնել USAID-ի ու Միացյալ Նահանգների կառավարության տեսակետի հետ և նրա համար պատասխանատու են բացառապես AICA-Հայաստանը, Anadolu Kültür-ը և Sweet Sixties/Tranzit.at-ը:



Քաղցր Վաթսուևականներ նախագիծը նախաձեռնել է tranzit.at-ը
Գոնեպետր և գաղափարը՝ Ռուբեն Արևշատյան, Գեորգ Շյոխամբ
Նախագծի գործընկերներ՝ whw - What, How & for Whom / Զագրեք and Anadolu Kültür / Մտամբուլ
Նախաձեռնող համակարգում՝ Միլյամ Պանինսկի
Նախագծի աջակիցներ՝ Allianz Kulturstiftung, Anadolu Kültür, bm:ukk, ERSTE Foundation, Culture Programme of the European Union

Քաղցր Վարանմունք
Նախագծի համադրողներ՝ Ռուբեն Արևշատյան, Օվգյուր Գյուլչե
Նախագծի համակարգում՝ Թագուհի Թորոսյան, Չիդեմ Մաթեր
Նախագծի թիմ՝ Թամար Նալջը, Կուբիլայ Օզմեն
Ֆիլմերի թարգմանություն՝ Արմինե Ավետիսյան, Սոնա Խաչատրյան
Նախագծի գործընկերներ՝ Ազգային կինոյի զարգացման հիմնադրամ, Հայաստանի ազգային կինոկենտրոն, Հայաստան-Թուրքիա կինոպլատֆորմ, AICA-Հայաստան, Anadolu Kültür, tranzit.at
Նախագծի աջակիցներ՝ ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալություն (USAID), Եվրասիա Համագործակցություն Հիմնադրամ, Allianz Kulturstiftung, ERSTE Stiftung

Բրոշյուր
Ձևավորման կոնցեպտ՝ Աննա Լիսկա և Անդրեաս Վեյլե
Ձևավորում՝ Շենգյուլ Էրթյուրք
Տեքստերի թարգմանություն՝ Արմինե Ավետիսյան, Էգեմեն Օզբան
Սրբագրում՝ Թագուհի Թորոսյան, Թամար Նալջը
Հայկական ֆիլմերի պաստառներ՝ «Մոռացված արվեստ. Հայկական կինոագրագիր 1926-1989», հեղինակ՝ Վիգեն Գալստյան, հրատ. Art Film Gallery, Երևան 2006
Թուրքական ֆիլմերի կադրեր՝ Ալիջան Մեկմեչի հավաքածուից
Հատուկ շնորհակալություն՝ Գեորգ Գևորգյանին, Շուշան Խաչատրյանին, Սոնա Հարությունյանին, Մերի Մարտիրոսյանին, Կարեն Շաքարյանին, Արթուր Պետրոսյանին, Մարլիս Պիլիոֆերին, Մաթիկ Ստեփանյանին

Քաղցր վարանմունք նախագիծն իրականացվում է «Քաղցր 60-ականներ» միջազգային հետազոտական ծրագրի շրջանակում, որը ժամանակակից արվեստի և տեսության տեսանկյունից ուսումնասիրում է 1960-ականների անհայտ, անտեսված, թաքնված համատեքստերը և տարածքները, որոնք դուրս են մնացել «ռոմանտիկ հեղափոխական ժամանակահատվածի» մեծ պատմից: «Քաղցր 60-ականներ»-ի համադրողական և արտիստական ուշադրության կենտրոնում են «հետգաղափարախոսական» հասարակությունները» (հետխորհրդային, հետսոցիալիստական, արևելավերոպական, միջինարևելյան, արևմտյան, կենտրոնասիական և հյուսիսաֆրիկյան երկրներում, ինչպես նաև՝ երկրորդ փուլում՝ Չինաստանում ու Լատինական Ամերիկայում), 60-ականների և 70-ականների արվեստի, մշակույթի ու հասարակությունների պատմական զարգացումների համեմատական վերլուծության և համատեքստավորման, ինչպես նաև ժամանակակից հասարակաբաղադրական ու մշակութային իրավիճակների վրա դրանց ունեցած հետագա ազդեցությունների ուսումնասիրության առումով:

60-ականների ժամանակաշրջանի ընդհանուր ընկալումը մինչ այժմ կապվում է արևմտյան մշակույթի ու արևմտյան գործընթացների ձևական հատվածային կրկնակումների հետ աշխարհի այսպես կոչված «ծայրամասերում» և «գավառներում»: Ի հակադրություն ներկայումս ընդունված տիրապետող պատումների ու պատմական կանոնների՝ Քաղցր 60-ականներ նախագիծը 60-ականների գործընթացները դիտարկում է ոչ իբրև «հրաբխի ժայթքում» որի ծնած արձագանքները տարածվել են աշխարհի ամացյալ մասերում, այլ իբրև սոցիալ-մշակութային, քաղաքական ու տնտեսական ընդհանուր մի իրադրություն, որը ծավալվել է զլոբալ համատեքստում ու սոցիալ-տնտեսական ու մշակութային արմատական բազմազան գործընթացների զարգացման հետ փոխկապակցված՝ աշխարհի բոլոր հատվածներում պայմանավորել է զարգացումը գուգահեռ արդիությունների:

Քաղցր վարանմունք կոնֆերանս-նախագծի նպատակն է հետազոտել արվեստային ու պատմական գործընթացները երկու երկրների, որոնք շարունակում են մնալ «ծայրամասերում»: Կոնֆերանսը ուսումնասիրում է 60-ականների հայկական և թուրքական կիսնոս փորձերով դրա միջոցով վերընթերցել աշխարհաքաղաքական առումով իրար հետ չառնչվող երկու իրավիճակների հասարակաքաղաքական և մշակութային հարացույցները, որոնք 1960-ականներին լինելով ինքնասահմանման ու ինքնադիրքավորման գործընթացի մեջ՝ քաղաքական ու մշակութային համակարգերի բարդ փոխկապակցումների միջոցով սահմանում և ձևավորում էին իրենց «Ուրիշին»:

20-րդ դարի ընթացքում 1960-ականները մի ժամանակահատված էր, երբ հարաբերությունները Հայաստանի ու Թուրքիայի միջև մտան զարգացման նոր փուլ: Արմատական փոփոխությունները, որ խորհրդային հասարակությունը ապրեց ստալինիզմից հետո՝ այսպես կոչված «Ձևիայի» շրջանում, կտրուկ փոխակերպումները Թուրքիայում՝ 1960-ի ու 1971-ի երկու ռազմական հեղաշրջումների միջև ընկած ժամանակահատվածում, որ ծավալվում էին Սառը Պատերազմի գուգահեռ, ընդհանուր առմամբ ընկալվում են իբրև «հիմնական համատեքստեր», որոնք երկու հասարակություններում էլ պայմանավորել են նոր սոցիալ-քաղաքական իրավիճակների ու մշակութային

կառույցների ստեղծումը, ինչպես նաև՝ խորացրել գոյություն ունեցող աշխարհաքաղաքական խզումը երկու երկրների միջև:



Սակայն ակնհայտ է, որ տեղային հիմնական պատումներից անդին՝ յուրաքանչյուր իրավիճակում ծավալվում էին շատ ավելի տարաբնույթ ու հակասական գործընթացներ: Վերջինիս արտահայտումները կարելի է վերհանել այդ ժամանակաշրջանի հասարակական, քաղաքական, տնտեսական և մշակութային զարգացումների բարդ բույլերի մեջ: Հայաստանի դեպքում հնարավոր է հետևել ինչպես ծայրահեղ անհատապաշտության վրա հիմնված գաղափարներն ու տեսլականները գալիս էին առձակատվելու և փոխարինելու սոցիալիստական կոլեկտիվիզմի գաղափարները և այլընտրանքային հասարակարգի նախագիծն ինքնին՝ ընդհանուրապես: Մտավորականների և արվեստագետների շրջանակներում աճող հետաքրքրությունը սեփական պատմության, լինելիության խնդիրների ու «ինքնության» առնչվող հարցերի հանդեպ ներկցվեցին 60-ականների ուշ արդիական համընդհանրական պատկերացումներին:

Սեփական անձի դիտարկումը դարձավ այդ շրջանի գրականության ու կինոյի հիմնական թեմաներից մեկը՝ դրանց շրջանակը նաև ձգելով հումանիտականից դեպի էուլթենական տեսլականներ: Հարացույցային անցման ընթացքում՝ մշակութային մտածողության մեջ համընդհանրական տեսլականների հետ կապված առաջանում էին նաև այլ վեկտորներ, որոնք, լինելով միահյուսված հումանիստական սկզբունքներին՝ մի կողմից նոր հնարավորություններ էին առաջարկում սոցիալիստական արդիականացման գաղափարների համար, իսկ մյուս կողմից՝ իրականության հանդեպ քննադատական ու օտարված կեցվածք ձևավորում:

Տարաբնույթ ընկալողական վեկտորների բավական բարդ համադրումը տարբեր վերընծայումներ է գտել 60-ականների սովետահայկական գրականության ու կինոյի մեջ, որտեղ նոր տիպի հերոսներն (ինչպես «Բարև՝ ես եմ» ֆիլմի գլխավոր հերոսը) անվերջ դեգերում են սեփական հիշողության տարածքներում, կամ այլ վայրերում՝ երկխոսության մեջ մտնելով իրենց երկրորդ ես-ի հետ ու փորձում հասկանալ իրենց դերը, կամ՝ լուծել հարաբերակցության խնդիրը իրենց մասնավոր գոյության ու համընդհանրությունների հետ կապված:

Որոշ այլ դեպքերում, չնայած այն փաստի, որ երբեմն հանգուցալուծումը գալիս է ինչ-որ իմաստով իբրև մի հայտնություն, հերոսներն, այնուամենայնիվ մտում են վարանմունքի ու տարակուսանքի մի վիճակի մեջ, քանի որ հարցականի տակ առնված խնդիրները, դեռևս բաց են մնում:

Թուրքիայի դեպքում 60-ականները, մյուս կողմից, պայմանավորված էին շատ նշանակալի երևույթներով, որոնք ընդգծում էին այդ ժամանակների ոգին: Արտագաղթի ալիքը Անատոլիայից մեծ քաղաքներ, մասնավորապես՝ Ստամբուլ, արագացրեց ու սաստկացրեց հակասությունը ավանդականի ու արդիականի, գյուղականի ու քաղաքայինի, արևելյանի ու արևմտյանի, այդի և այլնի միջև, միննույն ժամանակ, վերափոխելով նաև քաղաքային միջավայրը:

sweet



S

Սոցիալական ու քաղաքական դիրքերի ու հակադրությունների հանդիպման բազմակիության միջոցով գոյակցող ինքնությունները դիտարկվում ու քննարկվում էին նոր ձևակերպումների բազմազան փորձերի հետ մեկտեղ:

Այս իմաստով «Հայրենաբաղձ թռչուններ» ֆիլմը առավել էական օրինակներից է, որ ներկայացնում է ուրբանացման փորձությունները և նոր յուրացված ինքնությունների տագնապները:

Չախերի վերելքը, գլոբալ համատեքստով ոգեշնչված ուսանողական շարժումը և աշխատավոր դասակարգի տեսանելիությունը առաջին պլան էր մղվում և նոր հնարավորություններ ստեղծում միևնույն ժամանակ առաջ մղելով սեփական վարանմունքն ու կասկածները, 60-ականների թուրքական հասարակության թե՛ ինդիվիդուալիստական և թե՛ պաշտոնական շրջանակներում:

Թուրքական կինոն այդ շրջանում իր վերելքն էր ապրում, ուստի այն 60-ականները «կարդալու» բարենպաստ հիմք է ստեղծում:

Թուրքական կինոյի դասական շրջանը՝ նորաբանված իբրև Եշիլչամ (Կանաչ եղևնի), մշակութային արտադրության ու գեղարվեստական ձևի առումով առաջացրել և համառոտագրել է այս ժամանակները վերընձայուժների իրակույթում:

Եշիլչամը վերապրում էր 50-ականներից եկող (մինչև 70 և 80-ականները շարունակվող) մեղոդրամայի ժառանգությունը, միևնույն ժամանակ արտադրելով «սոցիալ ռեալիստական» ֆիլմերի մի շարք, որը մինչ այժմ թուրքական կինոյի պատմության լավագույն օրինակն է համարվում:

Այդ ֆիլմերից շատերը 60-ականների թուրքական մշակույթի ընդլայնված համատեքստի դիտակետից, իրապես ներկայացնում են 60-ականները կարևորվող թեմաների, հակասությունների ու հնարավորությունների թուրքական հասարակության գատորոշած մի համապարփակ տեսք:

Այս տեսքի մեջ «նոր»-ի (ինքնությունների, քաղաքականությունների, հավատալիքների) խոստումը, որ իսթանբլ է ժամանակաշրջանը գոյակցում է անհայտի, անկանխատեսելիի և անորոշի «վտանգի» հետ. Այստեղից էլ թուրքական արդիականացման նախադրյալները ու արդյունքները:

Քաղցր վարարմունքն՝ առաջարկելով երկու տարբեր դեպքերի 60-ականների հայկական ու թուրքական կինոյի ու մշակույթի համեմատական վերլուծությունը, առաջին քայլն է անում՝ հետազոտելու համար թաքնված համատեքստները երկու երկրների, որոնք այդքան հեռու են միմյանցից, լինելով այդքան մոտ:

sweet

— ՔԱՂՅՐ ՎԱՐԱՆՄՈՒՆՔ —

ՖԻԼՄԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵՌԱՆԿՅՈՒՆԻ

ՀԱՅՐԻԿ

ՄԵՆՔ ԵՆՔ, ՄԵՐ ՍԱՐԵՐԸ

ՄԱՐՄՆԱՎԱՃԱՌ ՍԵՐՍ

ՄԵԿ ԳԻՇԵՐՎԱ ՀԱՐՍԸ

ԴԱՌԸ ԿՅԱՆՔ

ՀԱՅՐԵՆԱԲԱՂՁ ԹՈՂՈՒՆՆԵՐԸ




Եռանկյունի

Հինգ դարբիններն ու պատանին, որոնց միավորում է տեղահանության տրավման, անցյալի հանդեպ ընդհանուր զուսպ թախիծը, սոցիալական նոր պայմաններին հարմարվելու ու կացարանը բարելավելու փորձը՝ եղբայրության ու միասնության անորսալի պահեր են ապրում փոքրիկ եռանկյունաձև դարբնոցում: Մինչդեռ մեծահասակները մուրճի հարվածի ձայների հետ զուգորդվող ժողովրդական մելամաղձոտ երգերի երգչախումբ են կազմում, , դեռահաս Հովիկը երագում է Հովիվուդի, Մերի Փիքֆորդի, Վայրի Արևմուտքի, խաղատների ու կինոյի մասին:

Կարճատև անորոշությունը հայրենաբաղձության և հայրենիքի միջև , անհայտ ապագայի նկատմամբ վախվորած լավատեսությունը, անթաքույց հիացմունքը համր Կինոյի դարաշրջանով. ֆիլմը երգ է քաղցր և դժբախտ ճամփորդության մասին դեպի մոռացության ջրերը, որը երբեք չի կարող լիովին ավարտվել:

1967, Հայֆիլմ ստուդիա, 84 րոպե.
Ռեժիսոր՝ Հենրիկ Մալյան
Սցենարի հեղինակ՝ Աղասի Այվազյան
Դերերում՝ Արմեն Զիգարխանյան, Ֆրունզե (Միեր)
Մկրտչյան, Մոս Սարգսյան, Պավել Արսենյան, Զուրաբ
Լապերաձե, Միշա Հովսեփյան, Ինա Ալարինա





Հայրիկ

«Հայրիկ» ֆիլմը «Ձնհալի» ժամանակաշրջանի ավարտին զուգահեռ նախանշում է հասարակաքաղաքական հարացույցի փոփոխությունը Խորհրդային Հայաստանում՝ անցումը արդիականից հետարդիական իրավիճակ: Մերունդների միջև հակամարտությունը նկարագրված է վաղ 70-ականների Երևանի կենտրոնում բնակվող մեծ ընտանիքի կյանքի միջոցով, որը էլ ավելի է բարդանում, երբ ժամանում է գյուղաբնակ նահապետը՝ գերդաստանի պապը: 1915 թիվը վերապրած այդ տարեց մարդը փորձում է վերագտնել իր ազգային ինքնությունը ու հայրենիքի զգացումը, վերականգնելու միջոցով պահպանողական այն արժեքները, որոնք կարձեստ վերացել են իր հետևորդների առօրյայից՝ ընտանիքի գաղափարը որպես ինքնավար միկրոտիեզերք, ազգի ապաստան, ինչպես նաև ուժի ու բարոյականության առավելագույն կուտակում:



1972, Հայֆիլմ ստուդիա, 76 րոպե.
 Ռեժիսոր՝ Հենրիկ Մալյան
 Սցենարի հեղինակ՝ Աղասի Այվազյան
 Դերերում՝ Ֆրունզե (Մհեր) Մկրտչյան, Ազատ Շերենց, Վարդուհի Վարդերեսյան, Հ. Կոստանյան, Հ. Դալլաքյան, Ա. Մելիքյանյան, Շ. Թուխմանյան, Ս. Զրչյան, Ա. Նիկողոսյան, Կ, Սուքիասյան



Մեք ենք մեր սարերը

Սարերում աշխատելիս Անտառամեջ գյուղի հովիվները կորած ոչխարներ են գտնում և որոշում են մորթել դրանց ու խորոված անել: Գիշերային ճաշկերույթի ընթացքում պարզվում է, որ ոչխարները պատկանում էին հարևան գյուղի բնակիչ Ռևազին: «Հանցագործները» վճարում են հասցված ֆասաը, որպեսզի հարթեն պատահարը: Սակայն պետությունը ինչ-որ կերպ իրագեկ է դառնում կատարվածին: Գյուղի հովվերգական կյանքը խախտվում է Երևանից ժամանած միլիցիայի լեյտենանտի ներխուժմամբ, ով փորձում է հետաքննել հանցագործությունը:

Ֆիլմի վերջում արդարության հասկացությունը, պետական պաշտոնյայի կողմից պարտադրված օրենքը, պետության դերի մասին պատկերացումները, գյուղական համայնքում սոցիալական կառուցվածքի վերաբերյալ ենթադրությունները հարցականի տակ են դրվում թե միլիցիայի աշխատակցի, թե գյուղացիների կողմից:

1969, Հայֆիլմ ստուդիա, 94 րոպե.
 Ռեժիսոր՝ Հենրիկ Մալյան
 Սցենարի հեղինակ՝ Հրանտ Մաթևոսյան
 Դերերում՝ Մոս Սարգսյան, Ֆրունզե (Մհեր) Մկրտչյան, Խորեն Աբրահամյան, Ազատ Շերենց, Արմեն Այվազյան, Արտավազդ (Արթուր) Փելեշյան





Բարև, ես եմ

Հիշողությունները մտերիմ ընկերոջ ու սիրելիի՝ Լուսյայի հետ 40-ականների Մոսկվայում ապրած երջանիկ պահերը անընդմեջ հետապնդում են երիտասարդ ֆիզիկոս Արտյոմ Մանվելյանին, ով ջանում է զարգացնել տիեզերական ֆիզիկան Արագածի գագաթին տեղակայված լաբորատորիայում: Անվերջ թափառելով անցյալի ու ներկայի միջև, պատերազմական Մոսկվայի, Հայկական բարձրավանդակի հավերժական ձմռան գագաթնակետի, Երևանի, 60-ականների Մոսկվայի ու իր սեփական հիշողության տարածքներում, հերոսը երկխոսում է իր երկրորդ եսի հետ:

1965, Հայֆիլմ Ստուդիա, 137 րոպե.
Ռեժիսոր՝ Ֆրունզե Դովլաթյան
Սցենարի հեղինակ՝ Արնոլդ Աղաբաբով
Դերերում՝ Արմեն Զիգարխանյան, Ռոլան Բիկով, Նատալիյա Ֆատեևա, Մարգարիտա Տերեխովա, Գալյա Նովենց



Մարմնավաճառ սերս

Թուրքական կինոյի բոլոր ժամանակների լավագույն սիրավեպը՝ «Մարմնավաճառ սերս» ֆիլմը «ռեալիստական մեյոդրամա է», որը վավերականորեն ներկայացնում է 60-ականների Մոսկվայի զգացմունքայնությունը: Բանաստեղծականորեն գրված ու հմտորեն սարքված՝ ֆիլմը զուգադրում է 60-ականների բազմազան ինտերիերների ու լանդշաֆտերի իրական պատկերները և վաճառական Հալիլի ու մարմնավաճառ Մարիհայի միստիկ սերը, որը կյանքի է կոչվում Թյուրքան Շորայի ու Իզգեթ Գյունայի տպավորիչ խաղով: Հիշվելով իր տպավորիչ երկխոսություններով և երաժշտության խորաթափանց օգտագործմամբ՝ ֆիլմը ցույց է տալիս ցանկության ու բաժանման միջև վարանմունքը ու անվերջ կասկածը, որը ձգվում է պատմության ավերոջ ընթացքում, բերելով այնուհանդերձ խզում՝ ընդհատելով ավանդական բարոյական մոտեցումը:

1968, Շերեֆ ֆիլմ, 90 րոպե.
Ռեժիսոր՝ Լուֆթի. Օ. Աքադ
Սցենարի հեղինակ՝ Մաֆա Օնալ
Դերերում՝ Թյուրքան Շորայ, Իզգեթ Գյունայ, Այֆեր Ֆերայ, Սեմիհ Սեգերլի, Այդեմիր Աքբաշ, Բեհչեթ Նաջար





Մեկ գիշերվա հարսնացու

Իր 11-րդ ամուսնալուծությունից ոչ շատ անց Բուրհանը՝ Կազանովան, հանդիպում է մի երիտասարդ կնոջ՝ Օյային ու ամուսնանում, սակայն առաջին գիշերվանից հետո հասկանում է, որ նա տարբեր է իր նախորդ կանանցից: Օյայի հնարքները սկսվում են առաջին գիշերվանից ու հասնում են գրեթե ֆանտաստիկ իրավիճակների, որոնք նա պատրաստում է Բուրհանի համար սկսած Արաբ արքայազնի կողմից հափշտակումից մինչև Գնչուական հանցախմբի հետ կռիվը: Քանի որ Օյան թաքնվում է տարբեր կերպարանքների տակ, Բուրհանը շարունակում է սիրահարվել նրան, մինչև որ լիովին հայտնվում է նրա ձեռքերում: Վերջապես սանձահարելով Բուրհանին՝ Օյան այս անգամ կրկին ամուսնանում է նրա հետ իր իրական ինքնությամբ: 60-ականների աշխույժ, սակայն շատ քիչ հայտնի զվարճալի կատագերկություններից մեկը լինելով, «Մեկ գիշերվա հարսնացու»-ն անչափ հետաքրքիր ֆիլմ է, որը զգացմունքայնորեն ցուցադրում է տարբեր մշակույթների ազդեցությունը 60-ականների կենսակերպերի վրա:

1962, Բե-Յա ֆիլմ, 77 րոպե
 Ռեժիսոր՝ Աթըֆ Յըլմազ
 Սցենարի հեղինակ՝ Վեդաթ Թուրքալի
 Դերերում՝ Օրհան Գյունշըրայ, Գյոնուլ Յազար, Ահմետ Թարիք Թեկչե, Մունա Փեքույսալ, Սաադեթթին Էրբիլ, Մուսիհի Քաներ, Էրոլ Քեսքին, Բեդիա Մուվահիթ



sweet

Դառը կյանք



Սկսվելով որպես սիրո անմեղ պատմություն մեծահարուստ կանանց սպասարկող մատնահարդար աղջկա ու աղքատ երիտասարդ եռակցողի միջև, «Դառը կյանք» ֆիլմը վերջում վերածվում է վրեժխնդրության պատմության: Ներմինն ու Մեհմետը փորձում են տուն գտնել ամուսնանալուց առաջ ու գիտակցում են, որ քաղաքի նոր թաղամասերը նախատեսված են միայն հարուստների համար: Երբ Ներմինը հանդիպում է Էնդերին, հարստության շողքը կամաց-կամաց գրավում է նրան, սակայն նրա կյանքը քայքայվում է, քանի որ Էնդերը շահագործում է նրան: Մեհմետը պլանավորում է վրեժխնդիր լինել Էնդերի քրոջ միջոցով, այսպիսով բոլոր հարաբերությունները ֆիլմում էլ ավելի են դառնանում:

Ֆիլմում զլխավոր դերերում զբաղված են ժամանակի ամենահայտնի դերասաններ՝ Թյուրքան Շորայը ու Այհան Ըշըկը: Դրամատիկ կառուցվածքով հանդերձ՝ ֆիլմը բացառիկ մելոդրամա է, որ ներկայացնում է 60-ականների Ստամբուլի դասակարգային նկարագիրը:

1962, Մինե ֆիլմ, 96 րոպե.
 Ռեժիսոր՝ Մեթին Էրքսան
 Սցենարի հեղինակ՝ Մեթին Էրքսան
 Դերերում՝ Այհան Ըշըկ, Թյուրքան Շորայ, Էբրեմ Բորա, Նեբահաթ Չեհրե, Հուսեյին Բարադան



Հայրենաբաղձ թռչունները

Համարվելով թուրքական կինոյի լավագույն ֆիլմերից մեկը Հայրենաբաղձ թռչունները Անատոլիայից Ստամբուլը “գրավելու” եկած մի ընտանիքի պատմություն է: Մինչ ավանդապահ ծնողները պասիվ սոցիալական կյանք են վարում, չորս երեխաներից յուրաքանչյուրը բախվում է “ժամանակակից” քաղաքի դժվարություններին: Ամենամեծ եղբայրը տաքսու վարորդ է, սիրահարվում է պորտապարուհուն: Միջնեկ եղբայրը ընտանեկան անկում ապրող բիզնեսում՝ ավտոմեքենաների վերանորոգման արհեստանոցում է աշխատում, միաժամանակ գաղտնի սիրավեպ է ապրում իր մրցակցի կնոջ հետ: Անգիտությունը ու բարձր հավակնությունները կամաց-կամաց հասցնում են ընտանիքը դժբախտ ավարտի, որքանով որ ֆիլմը մատնանշում է երկակի եզրահանգում՝ կրտսեր քույրը մարմնավորում է ավանդական բարոյականության ճգնաժամի ‘գոհը’, մինչդեռ ամենակրտսեր եղբայրը՝ ուսանողը խորհրդանշում է ‘հույսը’, որ խոստանում է ժամանակակից քաղաքային կյանքը:

1964, Արտիստ ֆիլմ, 93 րոպե.

Ռեժիսոր՝ Հալիթ Բեֆի
 Սցենարի հեղինակներ՝ Հալիթ Բեֆի , Օրհան Քեմալ
 Դերերում՝ Թանժու Գյուրսու, Ֆիլիզ Աքքըն, Ջենեթ Արքքըն,
 Օզդեն Չելիք, Փերվին Փար, Օնդեր Սումեր, Սևդա Ֆերդա,
 Մումթազ Էներ, Հուսեյին Բարադան, Դանյալ Թոփաթան



— ՔԱՂՅՐ ՎԱՐԱՆՄՈՒՆՔ —

բանախոսներ

Հրաչ Բայադյան
 Վիգեն Գալստյան
 Ահմետ Գյուրաթա
 Զեյնեփ Դադակ
 Սիրանուշ Դվոյան
 Դիմիտրիս Էլեֆթեորիտիս
 Նազարեթ Կարոյան
 Նադիրե Մաթեր
 Քեթի Չուխրով
 Ֆաթիհ Օզգյուվեն

Հրաչ Բայադյան

Հրաչ Բայադյանը մշակութային քննադատ է Երևանից: Մեդիայի ու մշակութաբանության թեմաներով դասախոսություններ է կարդում Երևանի Պետական համալսարանում: Բայադյանը տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների սոցիալական, քաղաքական ու մշակութային ներգրավման շուրջ բազմաթիվ հոդվածների հեղինակ է: Նրա վերջին հրապարակումներից է Նոր սոցիալ կարգը և փոփոխությունները մեդիա լանդշաֆտում հասարակական ասպարեզներում սոցիալիզմից հետո (խմբագիրներ՝ Անժելա Հարությունյան, Կաթրին Հորշելմանն, Մալքում Մայլս), Ինտելլեկտ, Բրիստոլ, Միացյալ Թագավորություն/Չիկագո, 2009; «Չանձրույթ» և «Հիերարխիա» Փոփոխությունների Քարտեզում (խմբագիրներ՝ Ջ. Բալադյան և Վ. Հավրանեք), tranzit.cz, JRP-Ringier, 2010: Հետխորհրդային մեդիա մշակույթը, քաղաքային տարածքները ու հետխորհրդային, հետգաղութային հարաբերությունները նրա ուսումնասիրությունների կիզակետների շարքում են:

Քեթի Չուխրով

Քեթի Չուխրովը մշակութային քննադատ է Ռուսաստանից: Արվեստի տեսության ու մշակութաբանության դոցենտ է Ռուսաստանի Պետական հումանիտար համալսարանում: Նա գրում է մշակույթի, փիլիսոփայության, արվեստի տեսության վերաբերյալ մի շարք պարբերականների համար, մասնավորապես *Московский Художественный Журнал*, *НЛО*, *Что Делать*, *Brumaria*, *Documenta magazines*, *Sarai readers*, *Art-forum*, *Springerin*, *E-Flux*, *Pushkin*, *After-all* և *OpenSpace*: Չուխրովը *Московский Художественный Журнал* ամսագրի խմբագրական խորհրդի անդամ է: Նրա հրատարակությունների շարքում են *Փաուստ & Է*, *Լոգոս*, *Մոսկվա 1999*; *Լինել-Խաղալ*՝ թատրոնը արվեստի փիլիսոփայական քննադատության մեջ, *European Univ. Press*, Մանկտ-Պետերբուրգ 2011; Քանակների պատերազմ դրամատիկ պոեզիա, Բորեյ մշակութային կենտրոն, Մանկտ-Պետերբուրգ 2003, Պարզապես մարդիկ (*Просто люди*) դրամատիկ պոեզիա, Տրանսլիտ/Ֆրի Մարքսիստ հրատարակչություն, Մոսկվա 2012

Ջեյնեփ Դադաք

Ջեյնեփ Դադաքը բակալավրի աստիճանը ստացել է Մարմարա համալսարանից, այնուհետև Բիլգի համալսարանից՝ մագիստրի կոչումը կինոյի ու հեռուստատեսության ոլորտում: Ներկայումս Նյու Յորքի համալսարանում դոկտորի թեկնածու է: Դասավանդում է կինո տարբեր համալսարաններում: 2004-ից ի վեր *Alt Yazı* կինո ամսագրերի խմբագրական խորհրդի անդամ է, նաև գրում է ամսագրի համար: Թուրքիայի կինոքննադատների միության անդամ է ու Ոսկե նարինջ հրատարակչության լույս ընծայած 60-ականների Թուրքական կինոն ու 70-ականների Թուրքական կինոն գրքերի երկու խմբագրերից մեկն է: Դադաքը 2001-ից կարճամետրաժ ու վավերագրական ֆիլմեր է նկարահանում: "Ափին" վավերագրական ֆիլմից հետո, որը նկարահանել էլ Մերվե Քայանի հետ միասին, այժմ աշխատում է իր «Կապույտ Ալիքը» առաջին լիամետրաժ գեղարվեստական ֆիլմի վրա, որը նորից նկարահանելու է Մերվե Քայանի հետ միասին:

Սիրանուշ Դվոյան

Սիրանուշ Դվոյանը գրականության քննադատ է, համեմատական գրականության դասախոս Երևանի Պետական Համալսարանում: Դասավանդում է Սփյուռքի, հատկապես 1920-1960թթ. ֆրանսահայ գրականություն, որն իր դոկտորական ատենախոսության թեման է: 2011 Դվոյանը Արտերիա քննադատական ամսագրի ու մշակութային ինտերնետ հարթակի համախմբագիրն է: Քննադատական գրվածքներում աշխատում է միջբնագավառային մեթոդների զարգացման ուղղությամբ մասնավորապես կենտրոնանալով արվեստի ու քաղաքականության հանդիպման շուրջ: Նրա վերջին հոդվածներից են Երկու ռազմավարություններ Արտերիայում և Խոսքի ու մասնակցության խնդիրները Հակոբ Օշականի կոնֆերանսի նյութերը (խմբագիր՝ Լ. Գալստյան): Հետազոտական հետաքրքրությունները ներառում են հայկական համայնքների մշակույթը հետխորհրդային իրականության մեջ, նոր սփյուռքային փորձառություններ ու հեղափոխական հոդավորումը գրականության մեջ:

sweet

Դիմիթրիս Էլեֆթերիոթիս

Դիմիթրիս Էլեֆթերիոթիսը դասախոսում է Գլազգոյի համալսարանի ֆիլմի, հեռուստատեսության ու թատրոնի բաժնում: Աշխարհահռչակ Screen ամսագրի խմբագիրն է, Պորտալ ու Հունաստանի կինոյի ուսուսումնասիրություններ ամսագրերի խորհրդատվական և խմբագրական խորհուրդների անդամ է: Նրա հրապարակումները ներառում են «Եվրոպայի հանրամատչելի կինո» (2001) ու «Կինոճամփոքություններ» (2010) մենագրությունները, «Ասիական կինոներ» խմբագրած ժողովածուն: Ընթերցարան և ուղեցույց (2006) ու մի շարք հոդվածներ հարաձուռն սևեռումով կինոյի միջմշակութային ասպեկտների տեսության ու պատմության շուրջ: Ներկայիս նախագծերից են մանկությանը վերաբերյալ հոդվածը Էմիր Կոուստուրիցայի «հարավսլավական» ժամանակաշրջանում, «Կինոն ու կոսմոպոլիտիզմը» թեմայով մենագրությունը և մի հատուկ թողարկում, որն անդրադառնում է Ժամանակակից հունական մշակույթում Փոխազդեցությունների խնդրին:

Վիզեն Գալստյան

Վիզեն Գալստյանը կինոքննադատ է, լուսանկարչության տեսաբան ու համադրող Սիդնեյից, Ավստրալիա: Գալստյանը Սիդնեյի Նոր Հարավային Ուելս արվեստի թանգարանում համադրողի օգնական է: Նա նաև Լուսադարան հայկական լուսանկարչության հիմնադրամի համահիմնադիրն ու տնօրենն է, ինչպես նաև ՌեԱրկ ճարտարապետական ուսուսումնասիրությունների կենտրոնի (Երևան) համահիմնադիրը: Գալստյանի համադրած վերջին ցուցահանդեսներից են Մոռացված արվեստ՝ Հայկական կինո աֆիշը (Հայաստանի Ազգայի պատկերասրահ, Երևան, 2006): Արդյունաբերական սիմֆոնիա՝ լուսանկարչությունն ու հետարդյունաբերական ժամանակաշրջանը (ՆՓԱԿ, Երևան 2011): Գեղագիտության տեսությունը, հայկական ու արևելաեվրոպական կինոն, 19-րդ դարի ու արդի լուսանկարչությունը Միջին Արևելքում, աֆիշի արվեստը, գաղութային ճարտարապետությունը Գալստյանին հետաքրքրող ուսուսումնասիրությունների թեմաներից են:

Ահմետ Գյուրաթա

Ահմետ Գյուրաթան դասավանդում է Բիլքենթ համալսարանի Հաղորդակցություն ու դիզայն բաժնում: Դոկտորի կոչում է ստացել Լոնդոնի Կոնսերվատիվ, որտեղ ուսուսումնասիրել է վերամշակուսները և միջմշակութային ընկալումները Թուրքական կինոյում: Թուրքական կինոյի պատմության, վերամշակուսների վերաբերյալ ուսուսումնասիրություն է հրատարակել: Եղել է մի շարք փառատոնների ժյուրիի անդամ, այժմ էլ Անիֆեսի վրա Փառատոնի խորհրդականն է: Թուրքիայի վավերագրական ռեժիսորների միության ու Թուրքիայի կինոքննադատների միության անդամ է: Պարբերաբար գրում է մշակութային ու քաղաքական ամսագրերի համար, ինչպիսիք են, օրինակ, bir+bir և Express:

Նազարեթ Կարոյան

Նազարեթ Կարոյանը արվեստի քննադատ է ու անկախ համադրող Երևանից: Արվեստի քննադատների միջազգային ասոցիացիայի Հայաստանի մասնաճյուղի նախագահն է: Կարոյանի գործունեությունը կապված էր 1980-ականներին Հայաստանում գործող Մև Քառակուսի արվեստագետների խմբի հետ: Նա նաև 3-րդ հարկ շարժման հիմնադիրներից է: 1990-ականներին Կարոյանը նախաձեռնեց Հայաստանում ժամանակակից արվեստի անդրադարձող առաջին In Vitro պարբերականը: Հայաստանում ու արտերկրում շուրջ 20 ցուցահանդեսների համադրող է: 2011 թվ. 54-րդ Վենետիկի բիենալեում Հայաստանի ազգային տաղավարի համա-համադրողն է: Կարոյանը նաև Արվեստի համադրողների երևանյան ամառային սեմինարների համահիմնադիրն է, ինչպես նաև Քննադատական ու կուրատորական ուսուսումնասիրություններ 2-ամյա դասընթացի նախաձեռնողը: Ժամանակակից արվեստի ինստիտուցիոնալացման, Եվրոպայի հետ համագործակցության, սոցիալ-քաղաքական համատեքստերի ներկայացման խնդիրները Կարոյանի ուսուսումնասիրությունների շրջանակներում են:

sweet

— ՔԱՂՅՐ ՎԱՐԱՆՄՈՒՆՔ —

Ծրագիր



Կինոնկարների ցուցադրությունը և կոնֆերանսը տեղի կունենան ՆԱԲԲԻ կինոթատրոնի մեծ դահլիճում

11 հունիս 2012 երկուշաբթի

- 11.00 Ցուցադրություն Հայրենաբաղձ թռչունները, 93 րոպ.
- 13.00 Ցուցադրություն Բարև, ես եմ, 137 րոպ
- 15.30 Ցուցադրություն Մեկ գիշերվա հարսնացու, 77 րոպ.

12 հունիս 2012 երեքշաբթի

- 11.00 - 13.30 Մաս I
60 – ականների համետքստը և հայկական կինոն
[Նազարեթ Կարոյան, Քեթի Չուխրով, Վիգեն Գալստյան, Սիրանուշ Դվոյան, Հրաչ Բայադյան]
- 14.30 - 17.00 Մաս II
60 – ականների համետքստը և թուրքական կինոն
(Նադիրե Մաթեր, Ջեյնեփ Դադաք, Ֆատիհ Օզգյուվեն, Ահմետ Գյուրաթա, Դիմիտրիս Էլեֆթերիտիս)

13 հունիս 2012 չորեքշաբթի

- 11.00 Ցուցադրություն Մարմավաճառ սերս, 90 րոպ.
- 13.00 Ցուցադրություն Հայրիկ, 76 րոպ.
- 15.00 Ցուցադրություն Դառը կյանք, 96 րոպ.

Նադիրե Մաթեր

Նադիրե Մաթերը Բիանթթի խորհրդականն է ու IPS հաղորդակցությունների հիմնադրամի նախագահը: Սկսել է զբաղվել լրագրությամբ, երբ աշխատում էր որպես սոցիալական ծառայության փորձագետ: Եղել է ազգային ու միջազգային բազմաթիվ ամսագրերի, թերթերի, ռադիոընկերությունների թղթակից: Նրա լրագրողական գործունեությունը հիմնականում առնչվել է իրավական հարցերի հետ և 12 տարի է, ինչ նա աշխատում է Բիանթթում: 1990-ականներին Լրագրողներ առանց սահմանների միջազգային կազմակերպության Թուրքիայի ներկայացուցիչն էր: Նրա գիրքը՝ «Չայներ ճակատից. Թուրք զինվորները քուրդ պարտիզանների հետ պատերազմելիս», որը կազմված է Հարավ-արևելքում ռազմական ծառայություն անցնող 42 երիտասարդների հետ ունեցած հարցազրույցներից, տպագրվեց, արգելվեց, հետո թույլատրվեց 1999 թ. Գիրքը թարգմանվել է անգլերեն, գերմաներեն, իտալերեն, ֆիններեն ու հունարեն: Մյուս գիրքը՝ «Փողոցը հիասքանչ է, ինչ տեղի ունեցավ 1968-ին» հրատարակվեց 2009 թ.

Ֆաթիհ Օզգյուվեն

Ֆաթիհ Օզգյուվենը ավարտել է Ավստրիայի բարձրագույն դպրոցը, հետագայում Ստամբուլի համալսարանի անգլերեն լեզվի ու գրականության բաժինը: Աշխատել է որպես խմբագիր Իլեթիշիմ խմբագրատանը ու դասավանդել է կինո ու հեռուստատեսություն Ստամբուլի Բիլգի համալսարանում ու Բոսֆորի համալսարանում: Ներկայումս Ռադիկալում շաբաթական կինո գրախոսություն է գրում: Թուրքերեն է թարգմանել Բորիսեպին, Նաբոկովին, Հենրի Ջեյմսին, Փոլ Ուոսթերին, Ֆլաների Օ'Քոններին, Վիրջինիա Վուլֆին, Բրեթ Իսթոն Էլլիսին: 1990թ.-ին հրատարակեց «Առեղծվածային պարոն Քարթալոլու» վեպը, էսսեների ժողովածու, Նուսեթեր Վերեկրից 2001թ.-ին ու կարճ պատմվածքների 3 ժողովածու՝ «Ինչ-որ բան է կատարվում» վերնագրով (2006), «Ես երբեք մտադրություն չունեի» (2007) ու «Նրանց պատմությունը, ովքեր միշտ ուզել են գրել» (2010)



sweet

Մաս I: 60–նների հայկական կինոն և հարակից համատեքստերը

Հայկական կինոյին նվիրված հատվածը կներկայացնի 60–ականների Խորհրդային Հայաստանի պատմական, քաղաքական, հասարակական ու տեսական համատեքստերից արտածվող խնդիրների լայն շրջանակ դիտարկելով դրանք մասնավորապես կինոյի և գրականության հետ համեմատությամբ մեջ: Վերանայելով հայկական կինոյի 60– 70–ականների զարգացման ընթացքը՝ Վիգեն Գալստյանը կանդրադառնա հայկական կինոյի «բախումնային» գեղագիտությանը, որպես ուշ արդիության այլընտրանքային արտահայտությունների մասնավոր օրինակ : Միրանուշ Դվոյանը «Եռանկյունի» ֆիլմի օրինակով կքննարկի թե 60–ականների կինոյում և գրականության մեջ գերակայող հիմնական պատմաբանը ինչպես էին ձևավորում յուրահատուկ լարուժներ կողեկտիվ և անձնական անհատականությունների միջև : Հրաչ Բայադյանը կհամեմատի գրական երկու տեքստ, ինչպես նաև «Մենք ենք, մեր սարերը» ֆիլմը և սցենարը, փորձելով վերլուծել ֆիլմի և գրականության մեջ ծագող գրաքննության բարդ խնդիրը, միաժամանակ անդրադառնալով Խորհրդային և հետխորհրդային ժամանակներում լայնորեն կիրառված «ազգային կինո» հասկացությանը: Քեթի Չուխրովը կծավալվի այնպիսի թեմաների շուրջ, ինչպիսիք են՝ քաղաքական ազատագրումը, հավասարությունը, սոցիալիզմի ապագան՝ լուսաբանելով թե ինչպես անհատի էթիկական արարքը և էթիկական փոխակերպումը, իբրև հետ–Ստալինյան սոցիալական վերակառուցման միջոցներ դարձան 60–նների Խորհրդային կինոյի և գրականության անքակտելի մաս, : Վերջապես՝ Նազարեթ Կարոյանը կվերլուծի 60–ականների Խորհրդային Հայաստանի հասարակական և մշակութային երեք առանցքային համատեքստերը, որոնք են՝ ընդհանուր աշխարհաքաղաքական և պատմական համատեքստը, 20–րդ դարի երկրորդ կեսի տեսական դիսկուրսների հետ դրա փոխհարաբերությունը , ինչպես նաև 60–ականների հասարակա–քաղաքական և մշակութային փոփոխությունների ազդեցությունը Խորհրդային ճամբարում տեղակայված հայկական մշակույթի վրա:



Մաս II: 60–նների թուրքական կինոն և հարակից համատեքստերը

Կոնֆերանսի թուրքական կինոյին նվիրված հատվածը կենտրոնանալու է խնդիրների լայն շրջանակի վրա, որոնք վերաբերում են ժամանակաշրջանի պատմական և գեղագիտական համատեքստերին և առընչվում են 60–ականների մշակույթի հետ : Նադիրե Մաթերը կներկայացնի ընդհանուր ներածական 60–ականների նշանակալից հետազոծերի մասին որոնք առկա էին Թուրքիայի և նրանից դուրս քաղաքական և մշակութային ասպարեզներում: Ահմեդ Գյուրաթան կենտրոնանում է 60–ականների թուրքական կինոյի դասական կինոյի ամենասկնառու նմուշներից մեկի՝ «Հայրենաբաղձ թռչուններ» ֆիլմի վրա և քննարկում է, թե սոցիալական ռեալիզմը ինչպես էր ներկայվում Թուրքիայի այդ ժամանակաշրջանի քաղաքական դիսկուրսների համատեքստում՝ մասնավորապես այնպիսի խնդիրների շուրջ, ինչպիսին էին՝ ազգային կինոն, միգրացիան և դասակարգի հետ կապված հարցերը: Ջեյնեփ Դադաբը խոսելու է թուրքական դասական կինոյում ամենատարածված ժանրի՝ մելոդրամայի մասին՝ փոխկապակցելով այն մյուզիքլի հետ, որը հետահայաց տեսանկյունից ունեցավ նշանակալից ազդեցություն թուրքական կինոյի զարգացման ուշ փուլերի վրա: Ֆատիհ Օզգյուվենը, անդրադառնալու է այդ ժամանակաշրջանի բացառիկ կինոկատակերգություններից մեկի՝ «Մեկ գիշերվա հարսնացու» ֆիլմին, այն առնչելով մշակութային բազմազան ազդեցությունների և վերընծայումների հետ: Դիմիտրիս Էլեֆթերիոթիսը լրացուցիչ խոսք կբերի հարակից համատեքստի, 60–ականների հունական պոպուլյար մշակույթի և կինոյի մասին դրանք փոխկապակցելով կոսմոպոլիտիզմի արտահայտություններին, որոնք ևս մասնակի հղումներ ունեն թուրքական կինոյի համընկնող երևույթների հետ:

sweet

sweet

ՔԱՂՅՐ ՎԱՐԱՆՄՈՒՆՔ

sweet confusion

tatlı karmaşa